# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՐ ՓՈՓՈԽՈՒԹԱՆ ՄԱՍԻՆ

<< Մաքուր Հրազդան>> ՀՈԱԿ-ը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար ,,Սեղմված բնական գազի,, ձեռքբերման նպատակով կազմակերպված << ՄՔ-ԳՀԱՊՁԲ-20/01>> ծածկագրով 29 նոյեմբերի 2019թ. կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝ Պայմանագրով նախատեսված ապրանքի ֆինանսական միջոցների նախատեսումը:

Փոփոխության նկարագրություն Պայմանագրով նախատեսված ապրանքի ֆինանսական միջոցների նախատեսումը:

Փոփոխության հիմնավորում՝ << Մաքուր Հրազդան>> ՀՈԱԿ- ի մոտ չի վերացել գնման, ապրանքների ձեռքբերման պահանջը:

Պատվիրատու՝ << Մաքուր Հրազդան>> ՀՈԱԿ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 02

«ՄՔ-ԳՀԱՊՁԲ-20/01» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ք. Հրազդան «03» փետրվար 2020 թ.

«Մաքուր Հրազդան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Ա. Գալստյանի. որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Լարգո Վինչ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ.Ասատրյանի, որը գործում է ՍՊ ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, (երկուսը միասին այսուհետ «Կողմեր»), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան
2. 1.1. Հիմք ընդունելով կողմերի միջև 2019 թ. նոյեմբերի 29-ին կնքված «Սեղմված բնական գազի» մատակարարման «ՄՔ-ԳՀԱՊՁԲ-20/01» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.15 կետը և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ով, հետագա համագործակցության համար կողմերը սահմանեցին սույն համաձայնագիրը՝
3. 1.1.1 Պայմանագրի N 1 «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» հավելվածը կսահմանվի հետևյալ կարգով /կցված է/ համաձայնագրին/:
4. 1.1.2 Պայմանագրի N 2 «Վճարման ժամանակացույց» հավելվածը սահմանել հետևյալ կարգով /կցված է/ համաձայնագրին:
5. Ապրանքի մնացած մասով համաձայնագիր կկնքվի ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը՝

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրվելու պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված երկու Կողմերի պարտավորությունները լրիվ ծավալով ու պատշաճ կատարելու ավարտի ժամկետը:

2.1. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները դադարում են գործել սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից:

3.Այլ պայմաններ

3.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրությանը համապատասխան:

3.3. Սույն համաձայնագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակներից (յուրաքանչյուրը բաղկացած է երկու թերթից և հավելվածներից), որոնցից մեկ օրինակը հանձնվում է Վաճառողին, իսկ մյուս օրինակը՝ Գնորդին:

Գ Ն Ո Ր Դ

<<Մաքուր Հրազդան>>

համայնքային ոչ առևտրային կազմակերպություն

ք.Հրազդան, Սահմանադրության հր. 1

ք.Հրազդան, Սահմանադրության հր. 1

վարչական շենք

,,ՎՏԲ,, Հրազդանի Մ/Ճ

Հ/Հ 16025083858000

ՀՎՀՀ 03018844

-----Ա. ԳԱԼՍՏՅԱՆ

Մ Ա ՏԱ Կ Ա Ր Ա Ր

<<Լարգո Վինչ>> ՍՊԸ

ք.Հրազդան , Հայ ֆիդայիների

ՀէԲ << Հրազդանի >> Մ/Ճ

ՀՀ 163158031068

ՀՎՀՀ 03022566

-----Վ.ԱՍԱՏՐՅԱՆ

*Հավելված N 1*
*«03» փետրվարի 2020 թ. կնքված*
*<<ՄՔ-ԳՀԱՊՁԲ-20/01>> ծածկագրով համաձայնագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 09411700 | Սեղմված բնական գազ | Գազ մեթան, տրանսպորտային միջոցների ներքին այրման շարժիչներում որպես վառելիք օգտագործելու համար, որը ստացվում է ԱԳԼՃԿ-ների տեխնոլոգիական պրոցեսների հիման վրա հաջորդող գազի մշակման մի քանի փուլից՝ խառնուրդի մաքրում, խոնավության և այլ աղտոտիչների հեռացում ու սեղմում, որը չի նախատեսում բաղադրիչների բաղադրության փոփոխություն: Գլանոթի լիցքավորման ընթացքում բնական գազի կոմպրեսացված վառելիքի ավելցուկ ճնշումը պետք է համապատասխանի ԱԳԼՃԿ-ի և լիցքավորվող գազաբալոնային միջոցների տեխնիկական պայմաններին և չպետք է գերազանցի 19.6 ՄՊա ճնշման սահմանը, գլանոթ լիցքավորվող գազի ջերմաստիճանը կարող է բարձր լինել շրջապատող միջավայրի ջերմաստիճանից ոչ ավել, քան 15 $^{0}C$, բայց չպետք է գերազանցի 60 $^{0}C$ ջերմաստիճանը: Ջերմատվությունը 1կգ այրելիս՝ 8000 կկ, ներստացվող ճնշումը՝ 2.2-2.5 ատմոսֆեր, | կգ | 264.3 | 3 599 766 | 13620 | Ք.Հրազդան | ՀՈԱԿ-ի կողմից տրվող պահանջագրի հիման վրա՝ ամսական ռեժիմով: | Համաձայնագրի կնքման օրվանից 20 օրացուցային օր հետո, 1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/ մատակարարման մյուս փուլերի դեպքում՝ յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև դեկտեմբերի 25-ը: |

*Հավելված N 2*
*«03» փետրվարի 2020 թ. կնքված*
*<<ՄՔ-ԳՀԱՊՁԲ-20/01>> ծածկագրով համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | |
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 09411700 | Սեղմված Բնական գազ | 360000 | 720000 | 1080000 | 1440000 | 1800000 | 2160000 | 2520000 | 2880000 | 3240000 | 359766 | 3 599 766 |

ՀՀդրամ

**Գ Ն Ո Ր Դ**
<<Մաքուր Հրազդան>>

համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ք.Հրազդան, Սահմանադրության հր. 1
ք.Հրազդան, Սահմանադրության հր. 1
վարչական շենք
,,ՎՏԲ,, Հրազդանի Մ/Ճ
Հ/Հ 16025083858000
ՀՎՀՀ 03018844
---------Ա. ԳԱԼՍՅԱՆ

**Մ Ա ՏԱ Կ Ա Ր Ա Ր**
<<Լարգո Վինչ>> ՍՊԸ

ք.Հրազդան , Հայ ֆիդայինների

ՀԷԲ << Հրազդանի >> Մ/Ճ

ՀՀ 163158031068

ՀՎՀՀ 03022566

---------Վ.ԱՍԱՏՐՅԱՆ